

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Հաստատվել է Լոռու Լերմոնտովո համայնքի
ավագանու 2022 թ-ի փետրվարի 25-ի թիվ 05-Ն որոշմամբ**

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ 2022թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	7
2.4. Համայնքի ֆին. իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	10
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	10
3.1. Համայնքի զարգացման տեսլական	10
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	11
4. ՀԶԾ ֆինանսավորում	Error! Bookmark not defined.
5. ՀԶԾ մոնիթորինգ	Error! Bookmark not defined.

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ներկայացնում եմ Լերմոնտովո համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է:

Զարգացման ռազմավարության սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, ՀՀ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներից այն է, էր համայնքի բնակչության մի մասը գտնվում համայնքից դուրս, աշխատանք փնտրելու պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Կան բնակիչներ, որոնք գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Եվ, քանի որ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ, առկա են հետևյալ խնդիրները. եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով գյուղացիները հաճախ կորցնում են բերքի 50%-ը; բռնկվում են անասունների վարակիչ հիվանդություններ՝ հիմնականում դաբաղ, որը ազդում է կաթնարտադրության և մսամթերքի արտադրանքի վրա:

Համայնքի Անտառաշեն համայնքում չի կատարվում կենցաղային աղբի հեռացում, բայց խոշորացման գործընթացից հետո նախատեսվում է լուծել այդ խնդիրը:

Համայնքի Լերմոնտովո բնակավայրը չունի լուսավորության խնդիր, իսկ Անտառաշեն բնակավայրում նախատեսվում է լուծել այդ խնդիրը:

Լերմոնտովո համայնքը ունի փոստային բաժանմունք և բուժ.ամբուլատորիա, որոնք սպասարկում են երկու բնակավայր՝ Լերմոնտովո և Անտառաշեն:

2017 թ-ից գործում է համայնքի մանկապարտեզը, որը վերակառուցվել է և վերաբացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ, որտեղ օրեկան հաճախում են երկու բնակավայրերից միջինը 18 երեխա:

Համայնքը ունի երեք գերեզմանատուն՝ ռուսական, հայկական և եզդիական, որոնք նախորդ հնգամյակում ցանքապատվել են:

Առաջիկայում նախատեսվում է մաս-մաս վերանորոգել համայնքային ճանապարհները՝ և միջհամայնքային, և դաշտամիջյան, խոշորացումից հետո լուծել Անտառաշեն համայնքի լուսավորության, աղբահանության և գազաֆիկացման խնդիրները:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը և ավագանու անդամները:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Լերմոնտովո համայնքը 2021 թ-ի խոշորացումից հետո ունի երկու բնակավայր՝ Լերմոնտովո և Անտառաշեն:

Լերմոնտովո բնակավայրը գտնվում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարքի շրջանի ամենացուրտ գոտում 1810կմ ծովի մակերեսից բարձրության վրա : Գյուղը, որը սկզբից անվանվել է Վոսկրեսենովկա, հիմնվել է 1840 թ-ին Ռուսաստանի Տաթևի մարզից "մոլոկանների" մոտավորապես յոթ ընտանիքների աքսորման հետևանքով : Աքսորված ընտանիքները հիմնավորվել են այստեղ, և այժմ կազմում են բնակչության 80%-ը: Համայնքում ապրում են նաև հայեր՝ 15% և եզդիներ՝ 5%: Ներկայիս Լերմոնտովոն իրենից ներկայացնում է բավականին զարգացած համայնք՝ 2001 թ-ին սոցիալական ներդրումների ծրագրով անց է կացվել ջրագիծ, 2006 թ-ին գյուղը գազաֆիկացվել է, 2010թ-ին լուծվել է համայնքի փողոցների լուսավորության հարցը: Համայնքում գոյություն ունի Մշակույթի կենտրոնը, որտեղ կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, գործում է նաև գրադարան :

Անտառաշեն բնակավայրը գտնվում է ծովի մակերեսից 1900մ բարձրության վրա, շրջապատված է կանաչազարդ անտառներով, բարձրադիր լեռներով: Լեռներից հոսող գետը հոսում է անմիջապես գյուղի ջրամբարը, որը բնակչությանը բավարարում է ամբողջությամբ: Համայնքի բնակիչները նախկինում զբաղվել են գազանաբուծությամբ, քանի որ գյուղում կար գազանաբուծական մեծ տնտեսություն, որը երկար տարիներ միակն է եղել Նույնիսկ անդրկովկասյան երկրներում, ուր արտահանվել է ոսկեփայլ կզաքիսի մորթի: 1990-1994 թ-ին տնտեսությունը փլուզվել է: Անգամ ամենուր կատարվող սեփական շնորհման գործընթացը համայնքում չիրականացավ: Համաձայն ՀՀ Գերագույն խորհրդի 31 հոկտեմբերի 1991թ. որոշման : Անտառաշենը առանձնացել է Լերմոնտովոյի գյուղական խորհրդից, դարձել ինքնուրույն: Եվ միայն 2021 թ-ին նորից միավորվեց Լերմոնտովո համայնքի հետ:

Լերմոնտովո համայնքում առկա է միջնակարգ դպրոցը՝ որտեղ կան և հայկական և ռուսական դասարաններ, ուր հաճախում են և Լերմոնտովոյի և Անտառաշենի երեխաները: Դպրոցը հիմնովին վերանորոգվել է պետական բյուջեի միջոցներով: 2011 թ-ի սկզբից կազմակերպվել է գյուղի աղբահանման հարցը, տեղադրվել են ծածկական գառներ: Առաջիկա պլաններում է գյուղամիջյան ճանապարհների կապիտալ վերանորոգումը: 2017 թ-ին Համաշխարհային բանկի միջոցներով Հայաստանի Տարածքային Չարգացման հիմնադրամի օգնությամբ վերակառուցվեց և վերաբացվեց համայնքի մանկապարտեզը, որից օգտվում են նաև Անտառաշենի բնակիչները: Նույն հիմնադրամի ծրագրով համայնքը շուտով կունենա նոր էքսկավատոր, ինչով կբարելավվի համայնքի կոմունալ ծառայությունները, միկրոավտոբուս՝ հինմականում դպրոցական և մանկապարտեզի երեխաների տեղափոխման համար և համայնքը կունենա ֆոտովոլտային կայան՝ ինչով կտնտեսվեն համայնքի միջոցները:

Համայնքի բնակիչները զբաղվում են հիմնականում հողագործությամբ և անասնապահությամբ և իրենց արտադրանքը՝ կաթնամթերքը և բանջարեղենը իրացնում են մարզկենտրոն Վանաձորի շոկայում:

Համայնքի բնակչության առկա թիվը՝ 1091,

այդթվում՝

0-1 տարեկան – 16

2-6 տարեկան - 85

7-17 տարեկան - 183

18-25 տարեկան – 126

26-42 տարեկան - 283

43-62 տարեկան - 245

63 և ավելի – 153

տնտեսությունների առկա թիվը - Լերմոնտովո՝ 191,

Անտառաշեն՝ 69:

2.2. Համայնքի ճանաչողական տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 584954,2 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 150900,9
- Համայնքում առկա են՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ, հազ.
Հանրային սննդի կետ	3	14400
Խանութներ	3	6000

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2021թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը		Արտադրանքի քանակը	
	Լերմոնտ.	Անտառ.	Լերմոնտ.	Անտառ.
կարտոֆիլ	90	15	11550	2250
կաղամբ	35	1	10500	300
ճակնդեղ	10	1	2750	250
գազար	11	0,2	2400	60
այլն	7	0,01	125	0,3

Անասունների տեսակը	Գլխաքանակը Լերմ. Անտ.	
Խոշոր եղջերավոր անասուններ	919	151
այդ թվում կովեր	444	114
Մանր եղջերավոր անասուններ	70	
այդ թվում մայրեր	42	
Այծեր	20	
այդ թվում մայրեր	12	
Թռչուններ	950	300
այդ թվում հավեր	950	300
Մեղվաընտանիքներ	125	

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 146 աշակերտ՝ Լերմոնտովո և Անտառաշեն համայնքներից: Դպրոցն ունի 20 աշխատող: Ուսուցիչները հիմնականում գալիս են Վանաձորից, ինչը համայնքի համար հանդիսանում է թույլ կողմերից մեկը:
- Համայնքում 2017 թ-ից գործում է մանկապարտեզ, ուր հաճախում են միջինը 20-25 երեխա նույնպես երկու համայնքներից:
- Համայնքում գործում է մեկ բուժ-ամբուլատորիա, որն սպասարկում է երկու համայնքների 1091 բնակիչների: Բուժ-ամբուլատորիայում աշխատում է մեկ բուժքույր:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Հայաստանի Հանրապետության Տարածքային Չարգացման Հիմնադրոմի կողմից իրականացվող ծրագրի /որը սկսվել է 2021 թ-ից և արդեն անցել է 2-րդ փորձաքննության փուլը/ արդյունքում Լերմոնտովո համայնքը կունենա նոր էքսկավատոր, ինչով կբարելավվի համայնքի կոմունալ ծառայությունները, միկրոավտոբուս՝ հիմնականում դպրոցական և մանկապարտեզի երեխաների տեղափոխման համար և համայնքը կունենա ֆոտովոլտային կայան՝ ինչով կտնտեսվեն համայնքի միջոցները:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2022	2023	2024	2025	2026
	Ընդամենը եկամուտներ	40013,0	40013,0	40013,0	40013,0	40013,0
Ա	Հարկային եկամուտներ	8233,9	8233,9	8233,9	8233,9	8233,9
1	Հողի հարկ	4596,3	4596,3	4596,3	4596,3	4596,3
2	Գույքահարկ	3640,6	3640,6	3640,6	3640,6	3640,6
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ	258,0	258,0	258,0	258,0	258,0
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	258,0	258,0	258,0	258,0	258,0
Գ	Ոչ հարկային եկամուտներ	4531,5	4531,5	4531,5	4531,5	4531,5
1	Վարձավճարներ	3351,5	3351,5	3351,5	3351,5	3351,5
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	1180,0	1180,0	1180,0	1180,0	1180,0
Դ	Դոտացիա	26989,6	26989,6	26989,6	26989,6	26989,6
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ	14098,2	14098,2	14098,2	14098,2	14098,2

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Լեւոնտոսովո համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության մոտ 20%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը խոչընդոտում են համայնքային ճանապարհների քանդված վիճակը:

2) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը

խոչընդոտող գործոններն են՝ սեյսմիկ գոտում գտնվելը և բնակչության անպատրաստ լինելը վտանգի դեպքում համապատասխան քայլեր դիմելու համար:

3) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններից են որակյալ սերմի բացակայությունը և բնակլիմայական պայմանները:

4) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են հիմնականում հեղեղատարների բացակայությունը:

5) Զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտում է համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից, գովազդի բացակայությունը և տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը::

6) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝ գործարար միջավայրի բացակայությունը, ձեռնարկությունների բացակայությունը և երիտասարդների միգրացիան:

7) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ երիտասարդների չամուսնանալը, երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը, պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը:

8) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝ բնակչության իրազեկվածության պակասը, նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը, անվճար բուժ սպասարկման քիչ լինելը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում այնպիսի բնակլիմայական պայմաններ, որի ժամանակ գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռք բերելու,

գ/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը իր ցանկացած գնով,

դ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	Համայնքի թույլ կողմեր
.Միջնակարգ դպրոցի առկայություն. .Մանկապարտեզի առկայություն - Բուժ-ամբուլատորիայի առկայություն .Բերրի հողերի առկայություն .Հեռահաղորդակցության առկայություն .Գազաֆիկացման առկայություն .Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող ավանդույթներ	.Խմելու ջրի ցանցի ոչ լավ վիճակ .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Ծնելիության նվազում .Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ .Համայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ .Տրանսպորտային ցանցի բացակայություն .Աշխատատեղերի պակաս
Հնարավորություններ	Սպառնալիքներ
.Խմելու ջրի պաշարի առկայություն .Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն .Բերրի հողերի առկայություն .Մարզկենտրոնից մոտ լինելը .Անասնազվիսաքանակի առկայություն	.Տարերային աղետների վտանգ .Գյուղ. մթերքների գների նվազում .Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն .Խիստ կլիմայական պայմաններ

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները և, հաղթահարելով խոչընդոտները՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Համայնքի գույքը կառավարել:
- 2) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- 3) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 4) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 5) Կազմակերպել համայնքի աղքատացումը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
- 6) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 7) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 8) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 9) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 10) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Լերմոնտովո համայնքում զբոսաշրջության զարգացումը խթանել:
- 11) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 12) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 13) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 14) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:

ԹԻՎ 1 Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

“ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ”

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի փողոցային լուսավորության խնդրի լուծում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ լուսավոր և գեղեցիկ համայնք						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք/հազ.դրամ/	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
		1000,0	1000,0				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Լուսավորման կետերի տեղադրում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք/հազ.դրամ/	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
		1000,0	1000,0				
Ծրագրի հիմնական գործողությունները	*լուսամուկների ձեռք բերում *հաղորդալարերի ձեռք բերում *հենասյուների ձեռք բերում *փողոցային լուսամուկների տեղադրում						
Ծրագրի բյուջեն	1000000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	*Ֆինանսական միջոցների առկայություն *Հենասյուների որոշակի քանակի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների առկայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Անտառաշեն բնակավայրի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022թ-ի մարտ – ապրիլ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացման արդյունքում Անտառաշեն բնակավայրում նախատեսվում է բոլոր փողոցների լուսավորության ապահովում և ունենալ լուսավորված ու գեղեցիկ համայնք և կենտրոնացված լուսավորման համակարգ:						

ԹԻՎ 2 Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

"ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ"

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Անտառաշեն բնակավայրի աղբահանության գործընթացի կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ունենալ բարեկարգ համայնք						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք/հազ.դրամ/	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
		800,0		800,0			-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Ունենալ բարեկարգ համայնք						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք/հազ.դրամ/	Թիրախային արժեքներ				
			2022	2023	20254	2025	2026
		800,0		800,0			-
Ծրագրի հիմնական գործողությունները	Աղբարկղների ձեռքբերում և տեղադրում: Աղբի դուրսբերման կազմակերպում						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 800000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համյանքն իր բյուջեից կկատարի 800000 դրամի չափով ներդրում:						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների առկայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի բնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2023 թ-ի մարտ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կտեղադրվեն աղբարկղներ, Անտառաշեն բնավայրը կունենա բարեկարգ տեսք						

ԹԻՎ 3 Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

“ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ”

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհների ենթակառուցվածքների պահպանում և շահագործում						
	Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք/հազ.դր ամ/	Թիրախային արժեքներ				
			2022	2023	20254	2025	2026
					5000,0		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Բարեկարգված միջհամայնքային , ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք/հազ.դր ամ/	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
					5000,0		
Ծրագրի հիմնական գործողությունները	*Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում * Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում * Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն` 5000000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ՀՀ Կառավարության աջակցություն, համայնքի բնակիչների աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Լերմոնտովո համայնքի երկու բնակավայրերի` Լերմոնտովոյի և Անտառաշենի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2024 թ-ի ապրիլ - սեպտեմբեր						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այս ծրագիրը կիրականացվի Լերմոնտովո համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման նպատակով: Ծրագրի անմիջական նպատակն է` համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը, ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհների վերանորոգումը, որպեսզի բնակիչները կարողանան իրենց մշակած գյուղատնտեսական մթերքը առավելագույնս անվնաս տեղափոխեն:						

ԹԻՎ 4 Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

“ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ”

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Անտառաշեն բնակավայրի ճանապարհների պահպանում և վերանորոգում						
	Բնակավայրի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
		5000,0		-	-	5000,0	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բարեկարգված միջհամայնքային , ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
		5000,0				5000,0	
Ծրագրի հիմնական գործողությունները	*Կատարել բնակավայրի ճանապարհների բարեկարգում						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն` 5000000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ՀՀ Կառավարության աջակցություն, համայնքի բնակիչների աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Լերմոնտովո համայնքի երկու բնակավայրերի` Լերմոնտովոյի և Անտառաշենի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2025 թ-ի ապրիլ-սեպտեմբեր						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այս ծրագիրը կիրականացվի Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի փոխադրամիջոցների աշխատանքի բարելավման նպատակով: Ծրագրի անմիջական նպատակն է` համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով ապահովումը:						

ԹԻՎ 5 Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

“ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ”

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի գազաֆիկացում						
	Բնակավայրի բնակիչներին ապրելակերպի բարելավում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք/հազ.դր ամ/	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
							10000,0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բարեկարգված միջհամայնքային , ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2022	2023	2024	2025	2026
							10000,0
Ծրագրի հիմնական գործողությունները	*խողովակների ձեռքբերում * մոնտաժ						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 10000000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ՀՀ Կառավարության աջակցություն, համայնքի բնակիչների աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2027 թ-ի մայիս - օգոստոս						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի բնակիչների սոցիալական վիճակը: Կտնտեսվեն նրանց ժամանակն ու միջոցները: Կպահպանվեն անտառածածկ տարածքները, դրանով իսկ կնվաղեցվի բնապահպանությանը հասցվող վնասը:						